ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 21 » օգոստոս 2024թ. No 4544 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 47-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N EL/01/1576-24 առ 19.08.2024թ փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել թվով 4 դեղի գրանցման հավաստագրերի ժամկետի երկարաձգումը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի հավաստագրի ժամկետի երկարաձգման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Լ.ՆԱՆՈՒՇՅԱՆ

Recoverable Signature

X

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի օգոստոսի « 21 » - ի N4544 - Ա հրամանի

Գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգման դեղերի ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն  առ 28.02.2019 որոշման

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Զիդին | քլորհեքսիդին (քլորհեքսիդինի բիգլյուկոնատ) | մոմիկներ հեշտոցային | 16մգ; (10/2x5/) | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Հրանտ Վարդանյան 22 | Հայաստանի Հանրապետություն | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Հրանտ Վարդանյան 22 | Հայաստանի Հանրապետություն | ԱԴ | 22229 16.08.2024 |
| 2 | Բիսոպրոլոլ | բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ) | դեղահատեր թաղանթապատ | 2,5մգ; (30/3x10/) բլիստերում | Ռեպլեկ Ֆարմ ՍՊԸ-Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե | Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն | Ռեպլեկ Ֆարմ ՍՊԸ-Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե | Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն | Դ | 22230 16.08.2024 |
| 3 | Բիսոպրոլոլ | բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ) | դեղահատեր թաղանթապատ | 5մգ; (30/3x10/) բլիստերում | ՌԵՊԼԵԿ ՖԱՐՄ ՍՊԸ-Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե | Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն | Ռեպլեկ Ֆարմ ՍՊԸ-Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե | Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն | Դ | 22231 16.08.2024 |
| 4 | Իբուպրոֆեն ԱԿՏԻՎ | իբուպրոֆեն | դեղահատեր թաղանթապատ | 400մգ; (30/3x10/) բլիստերում | ՌԵՊԼԵԿ ՖԱՐՄ ՍՊԸ. Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե | Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն | Էսկուլապ ՍՊԸ, 17/2, 1-ին զանգված, Դավիթաշեն, 0054, Երևան | Հայաստանի Հանրապետություն | ԱԴ | 22232 16.08.2024 |